ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ Լառա Պետրոսյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Ատլանտա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Լառա Պետրոսյան, ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ ԱՄՆ (Ատլանտա), 2023թ. դեկտեմբերի 9-ից 16-ը:

Հրավիրող կողմը՝ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (UNODC):

Գործուղման նպատակը՝ մասնակցություն Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի (UNCAC) անդամ երկրների համաժողովի 10-րդ նստաշրջանին:

Քննարկված թեմաները՝ հակակոռուպցիոն բարեփոխումների արդյունքում արձանագրած ձեռքբերումներ, հակակոռուպցիոն նոր ռազմավարություն և դրանից բխող 2023-2026թթ. գործողությունների ծրագիր, կոռուպցիայի կանխարգելում, հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինների ձևավորում, բարեվարքության համակարգ, հայտարարագրման համակարգ, կոռուպցիայի դեմ պայքար, կոռուպցիոն հանցագործությունների քննություն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կարողությունների զարգացում, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կարգավորումներ, իրական շահառուներ, ազդարարման համակարգ, գնումների ընթացակարգեր, բիզնես բարեվարքություն, հակակոռուպցիոն քաղաքականության մոնիթորինգ և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ Լառա Պետրոսյանը մասնակցել է սույն թվականի դեկտեմբերի 11-ից 15-ը ԱՄՆ Ատլանտայում կայացած «Կոռուպցիայի դեմ պայքարի» ՄԱԿ կոնվենցիայի (UNCAC) անդամ երկրների համաժողովի 10-րդ նստաշրջանին:

Համաժողովի շրջանակում Արդարադատության նախարարության ներկայացուցիչը հանդես է եկել ելույթներով՝ ներկայացնելով ՀՀ-ում իրականացված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունքում արձանագրված ձեռքբերումները, նոր հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026թթ" գործողությունների ծրագրով նախատեսվող գործողությունները:

Մասնավորապես, ներկայացվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ որպես անկախ կոլեգիալ մարմնի գործառույթները, վերջինիս շարունակական հզորացման կապակցությամբ հակակոռուպցիոն ռազմավարությամբ ամրագրված գործողությունները, ազդարարման համակարգի և իրական շահառուների վերաբերյալ կարգավորումները, իրական շահառուների ռեգիստրի ձևավորումը, հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնների ընդունումն ու իմպլեմենտացումը, համընդհանուր հայտարարագրման ինստիտուտի ներդնումը, բարեվարքության ստուգման կառուցակարգերի կատարելագործումը և այլն: Ներկայացվել է նաև հակակոռուպցիան կրթության և հանրային իրազեկման արշավների կարևորությունը հանրության մասնակցայնությունն ապահովելու ու կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականություն ձևավորելու նպատակով: ԱՆ ներկայացուցիչը հանդես է եկել ելույթով՝ անդրադարձ կատարելով նաև ՄԱԿ «Կոռուպցիայի դեմ պայքարի» կոնվենցիայի վերանայման մեխանիզմի շրջանակում ՀՀ կողմից իրականացված գործողություններին և ձեռքբերումներին:

Համաժողովի շրջանակներում ԱՆ ներկայացուցիչը, հիմք ընդունելով ներպետական կարգավորումները, ներկայացրել է մի շարք առաջարկություններ ՄԱԿ բանաձևերի նախագծերի վերաբերյալ, որոնք գնահատվել են առաջադեմ արևմտյան երկրների կողմից:

Լ. Պետրոսյանը մասնակցել է նաև «Հանուն ժողովրդավարության» գագաթնաժողովի շրջանակներում ձևավորված «Ֆինանսական թափանցիկություն և բարեվարքություն» թեմատիկ խմբին (FTI) Democracy Cohort, որին քննարկվել է կոռուպցիոն գործողություններին մասնակցող և խթանող անձանց պատասխանատվությանն առնչվող հարցեր:

Լ. Պետրոսյանը քննարկումներ է ունեցել նաև "Open Ownership" կազմակերպության ներկայացուցիչների հետ, ովքեր պատրաստակամություն են հայտնել աջակցելու ՀՀ-ում իրական շահառուների ինստիտուտի և ռեգիստրի կատարելագործմանը: Քննարկումներ են տեղի ունեցել նաև "CIPE" կազմակերպության ներկայացուցիչների հետ, ովքեր պատրաստակամություն են հայտնել աջակցելու բիզնես բարեվարքությանը ու հակակոռուպցիոն իրազեկմանն առնչվող Հակակոռուպցիոն ռազմավարությամբ ամրագրված գործողությունների իրականացմանը:

ՀՀ արդարադատության նախարարության
Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի
վարչության պետ

Լառա Պետրոսյան
20.12.2023թ.